CYFEST վիդեո ցուցադրության ծրագիր՝ «Զգայական/Նյուանսներ»
Կուրատոր՝ Վիկտորիա Իլյուշկինա

«Զգայական/Նյուանսներ» ծրագիրը ուսումնասիրում է այն բարդ եղանակները, որոնց միջոցով ժամանակակից մեդիա-արվեստագետներն ու ռեժիսորները վերաիմաստավորում են մեր ընկալման ըմբռնումը: Զուտ զգայական փորձառությունը փաստագրելու փոխարեն, ծրագրում ներգրավված արվեստագետները կիրառում են նորարարական մեթոդներ՝ ընկալումը վերածելով աբստրակտ, փոխաբերական և գիտական հասկացությունների: Նրանց աշխատանքները ենթադրում են, որ ընկալումը պարզապես արտաքին ազդակների պասիվ ընդունում չէ, այլ բարդ, մարմնավորված և մշակութային միջնորդությամբ ձևավորված գործընթաց:

Տեսողությունն ու լսողությունը զգայական էսթետիկայի ընկալման հիմնական միջոցներն են: Արվեստագետները դրանք օգտագործում են՝ արթնացնելու այլ՝ ավելի վիսցերալ զգայություններ, ստեղծելով բազմաշերտ ու հարուստ փորձառություն: Սերգեյ Փարաջանովի ֆիլմը ուղղակիորեն ներգրավում է տեսողությունը՝ կենտրոնանալով արվեստի գեղանկարային հյուսվածքի և զգայական մթնոլորտի վրա: Նրա էսթետիկ լեզուն վերաբերում է ոչ միայն նրան, ինչ երևում է, այլև այն բանին, թե ինչպես է այն ընկալվում աչքի կողմից: Լուի-Պոլ Կարոնի աշխատանքներում կիրառվում է ամերիկյան ռեալիստական գեղանկարչության էսթետիկան՝ ստեղծելու համար վիզուալապես տպավորիչ, սակայն տագնապալի տեսարաններ: Մաթիլդա Ռեյնոյի «Լեմնա»-ն համադրում է թվայնացված 3D պատկերները յուրահատուկ գունային գամմայի հետ՝ բույսերի աշխարհը դիտարկելու համար:

Ծրագրի մյուս արվեստագետները գործում են արվեստի և էմպիրիկ գիտության հատման կետում՝ ընկալումը դիտարկելով որպես տվյալներով կառավարվող ուսումնասիրության դաշտ: Էմի Կարլը վիզուալացնում է գիտական գործընթաց՝ ոսկորի աճը, որը ներկայացվում է որպես բջիջների աճի համար նախատեսված 3D-տպված սկաֆոլդ բիոռեակտորում. այսպիսով նա վերածում է բարդ կենսաբանական գաղափարները շոշափելի իրականության: Ալեսանդրո Զանիերը վիզուալացնում է ԴՆԹ-ի տվյալները և դրանք վերածում ձայնային լանդշաֆտների՝ անհետացող բույսի գենետիկական կոդը դարձնելով լսելի փորձառություն: Էթել Լիլիենֆելդի աշխատանքը տեսողության անմիջական ուսումնասիրություն է, որը մանրակրկիտ վերլուծում է գեղեցկության և մարմնի իդեալները վիրտուալ ինֆլյուենսերի միջոցով: Մաթիլդա Ռեյնոյի «Լեմնա»-ն օգտագործում է նաև 3D ծրագրային լեզվի տեխնիկական գործառույթները և բազմաշերտ երկխոսությունները՝ իր պատկերներին ձայնային ուղեկցություն ստեղծելու համար:

Թվով մի շարք արվեստագետներ զբաղվում են ընկալման վիսցերալ և շոշափելի կողմերով՝ ստեղծելով հարուստ խաչաձև զգայական երկխոսություն: Հպման զգացողությունը բացահայտվում է նյութերի, գործընթացների և փոխաբերական փոխազդեցությունների միջոցով: Սերգեյ Փարաջանովի ֆիլմում ընդգծվում են գեղանկարչության շոշափելի հատկությունները: Էմի Կարլի աշխատանքը խորապես կապված է հպման հետ՝ առնչվելով տպագրության ֆիզիկական ընթացքի և ոսկրային հյուսվածքի աճեցման շոշափելի իրականության հետ: Էթել Լիլիենֆելդի նախագիծը հպման գաղափարական փոխաբերություն է՝ վիրտուալ տարածքում խորհրդանշական և քննադատական կապի ակտ: Յուլյա Շարկինայի ֆիլմն ու պերֆորմանսը

ուսումնասիրում են ներքին տեսողության գաղափարը՝ մարմինը դարձնելով ուղեցույց դեպի ենթագիտակցություն և բացահայտելով տեսնելու հոգևոր ձևը:

Ի վերջո, որոշ արվեստագետներ ուսումնասիրում են զգայությունների մշակութային և սոցիալական կողմերը՝ ցույց տալով, թե ինչպես են դրանք գործում որպես հիշողության և հավաքական ինքնության կրողներ: Համն ու հոտը՝ ամենանուրբ զգայությունները, հիմնականում արթնացվում են միջավայրի և թեմատիկայի միջոցով: Ալեսանդրո Զանիերի աշխատանքը, որը կենտրոնացած է Վենետիկյան լագունայի կոնկրետ բույսի վրա, հիշեցնում է աղի ջրի, ճահճի և ծաղկող էկոհամակարգի բույրը: Նպատակը՝ պահպանել վերացող վայրի էությունը, որը ենթադրում է նրա բոլոր զգայական հատկանիշների, այդ թվում բուրմունքի, արտացոլումը: Լուի-Պոլ Կարոնի ռեստորանի տեսարանը անմիջապես առաջացնում է համի և հոտի զգացողություն. ուտելու առօրյա ակտը հակադրվում է այրվող աշխարհի դրամատիկ պատկերին: Սա ցույց է տալիս, որ զգայական ընկալումը միայն մասնավոր ֆիզիոլոգիական երևույթ չէ, այլ մեր ընդհանուր սոցիալական աշխարհի առանցքային բաղադրիչ:

Ընդհանուր առմամբ «Զգայական/Նյուանսներ»-ում ներկայացված գործերը վկայում են, որ ժամանակակից արվեստային պրակտիկան դարձել է փիլիսոփայական և գիտական հետազոտությունների նոր դաշտ: Արվեստագետները իրենց մեթոդներն օգտագործում են՝ ուսումնասիրելու իրականությունը, գիտակցությունը և այն, թե ինչ է նշանակում ընկալել աշխարհը տեխնոլոգիաներով և մշակույթով միջնորդված վիճակում: Ծրագիրը բարձրացնում է հարցեր տեխնոլոգիաների դերի մասին ընկալման ձևավորման մեջ՝ հետազոտելով, թե ինչպես են դրանք կարող միաժամանակ բացահայտել զգայական մեխանիզմները և հանդես գալ որպես նոր տեսակի ֆիլտր: